ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №127-Ա

«30» 03 2023 թ.

ք. Երևան

## Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 42-րդ հոդվածի 3-րդ մասով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 45-րդ հոդվածի 7-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 911-Ն որոշմամբ՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Գագիկ Արշավիրի Հայրապետյանին նշանակել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ս. թ. մարտի 31-ից:
2. Գ. Հայրապետյանին հանել դատախազների թեկնածությունների ցուցակից:
3. Գ. Հայրապետյանին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում շնորհված դասային աստիճանը համապատասխանեցնել արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ